ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/12116-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-207-23.03.2022-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 395 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-207-23.03.2022-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին հոդվածով առաջարկվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 35-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ կարգավորելով վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ծանուցումների հետ կապված հարաբերությունները:

Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ (այսուհետ՝ հիմնավորում) նշվում է, որ (...) վարչական վարույթները հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված հիմքերով, որի արդյունքում վարչական մարմնի կողմից հետապնդվող նպատակը վարչական ակտի ընդունումն է: Վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ վարչական մարմինները պարտավոր են օրենքով սահմանված կարգով ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին, որպեսզի պահպանվեն նրանց՝ օրենքով սահմանված իրավունքները և ազատությունները, մասնավորապես՝ լսված լինելու իրավունքը, ապացույց ներկայացնելու իրավունքը և այլն: Սակայն վարչական վարույթի իրականացման ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են վարչական վարույթի մասնակցի բացակայությունը և վերջինիս պատշաճ ծանուցման անհնարինությունը: (...) Գործնականում խոչընդոտներ են առաջանում նաև հայտնաբերված խախտումների կապակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ընթացքում, երբ գործի քննությունն իրականացնող իրավասու մարմինն օրենքով սահմանված կարգով կրում է պարտականություն՝ գործի քննությունն իրականացնել միայն իրավախախտում կատարած անձանց՝ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցումն ապահոված լինելու պայմաններում: Նախագծի ընդունման արդյունքում նախատեսվում է կարգավորել վարչական մարմինների կողմից վարչական վարույթի մասնակիցների ծանուցումների հարցը:

Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ նշված վերլուծություններից պարզ է դառնում, որ նախագծի նպատակն է կարգավորել վարչական վարույթի մասնակիցների ծանուցումների հետ կապված հարցերը:

Այս առումով հարկ ենք համարում նշել հետևյալը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր...(): Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի

համաձայն՝ օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում:

Նույն օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-4-րդ մասերում ամրագրված կարգավորումների համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ): Դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան՝ իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ նույն օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ): Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

Վերոգրյալ իրավակարգավորումների բովանդակությունից պարզ է դառնում, որ նորմատիվ իրավական ակտերում համասեռ հոդվածները միավորվում են մեկ գլխում, իսկ նորմատիվ իրավական ակտերում գլուխների և հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը: Տվյալ պարագայում անդրադառնալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին՝ հարկ է նկատել, որ հիշյալ օրենքը, հիմքում դնելով վարչական վարույթի միմյանց հետ փոխկապակցված երեք փուլերը, առանձին գլուխներով կարգավորել է վարչական վարույթի փուլերին առնչվող հարաբերությունները: Ասվածի համատեքստում հարկ է նկատել նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի «Վարչական վարույթի հարուցման փուլը» վերտառությամբ 5-րդ գլխում ամրագրված են միայն վարչական վարույթի հարուցման փուլին առնչվող կարգավորումներ:

Տվյալ պարագայում անդրադառնալով ներկայացված նախագծին՝ հարկ է նկատել, որ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 35-րդ հոդվածը, որը զետեղված է օրենքի 5-րդ գլխում:

Այս առումով նկատի ունենալով նախագծով ամրագրված կարգավորումների բնույթը, մասնավորապես այն, որ նախագծով առաջարկվող կարգավորումներով նախատեսված են ծանուցումների հետ կապված ընդհանրական դրույթներ, որոնք վերաբերում են ոչ միայն հարուցման, այլ նաև վարչական վարույթի ընթացիկ փուլին (տե՛ս, օրինակ՝ նախագծով նոր խմբագրությամբ շարադրվող հոդվածի 13-րդ մասը) և հաշվի առնելով նախագծով հետապնդվող նպատակը, այն է՝ կարգավորել վարչական մարմինների կողմից վարչական վարույթի մասնակիցների ծանուցումների հարցը՝ հարկ ենք համարում նշել, որ ներկայացված նախագծով առաջարկվող կարգավորումներն անհրաժեշտ է դիտարկել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ գլխում և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ, 8-րդ և 10-րդ մասերում ամրագրված կարգավորումների պահանջների համատեքստում:

2. Նախագծի 1-ին հոդվածով «Վարչարարության հիմունքների և վարչական

վարույթի մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 35-րդ հոդվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ, 7-րդ և 8-րդ մասերի պահանջներին, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով: Հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը: Օրենսդրական ակտի հոդվածները համարակալվում են արաբական թվանշաններով: Օրենսդրական ակտի հոդվածներն ունենում են վերնագրեր՝ բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:

3. Նախագծի 1-ին հոդվածով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 35-րդ հոդվածի 15-րդ մասում «հանձնված (ստացված)» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «վերջակետ» կետադրական նշանը:

4. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կարգավորման պահանջները, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտն ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը, և նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվում է կատարել մեկ փոփոխություն՝ հարկ ենք համարում նշել, որ նախագծի վերնագիրն անհրաժեշտ է վերանայել՝ համապատասխանեցնելով նախագծով առաջարկվող կարգավորումների բովանդակությանը:

5. Նախագծի 1-ին հոդվածում «35-րդ հոդված» բառերն անհրաժեշտ է փոխարինել «35-րդ հոդվածը» բառերով:

Նախագծով նոր խմբագրությամբ շարադրվող 35-րդ հոդվածի 14-րդ մասի վերաբերյալ առաջարկում ենք դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների համանմանությամբ հետևյալ դրույթը նախատեսելու հարցը.

«14. Եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է, կամ պատվիրված նամակով ուղարկելու դեպքում ուղարկելու օրվանից հետո երկշաբաթյա ժամկետում վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն ուղարկվում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ աշխատանքի վայրի հայտնի հասցեով և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին, իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով.

2) իրավաբանական անձի դեպքում՝ վարչական վարույթում իրավաբանական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ այլ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 395 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Երանուհի Թումանյանցին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-207-23.03.2022-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-207-23.03.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդված շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ վկային, փորձագետին, թարգմանչին եւ այլ մարմինների ներկայացուցիչներին, վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի եւ այլ պայմանների մասին:

2. Վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին օրենքով սահմանված կարգով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչեւ վարչական ակտն ընդունելու միջեւ ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

3. Վարչական վարույթի ընթացքում ծանուցումներն ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն, իսկ սույն հոդվածով նախատեսված դեպքերում ուղարկվում են էլեկտրոնային փոստի հասցեով կամ հաղորդակցության այլ միջոցներով:

4. Ծանուցումները փոստային առաքմամբ ուղարկվում են վարույթի մասնակիցներին՝ վերջիններիս կողմից վարչական վարույթի ընթացքում հայտնած հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում իրավաբանական անձի գրանցման կամ ֆիզիկական անձի հաշվառման հասցեով:

5. Ծանուցումներն ուղարկվում են պատվիրված նամակով, եթե վարչական վարույթի ընթացքում իրականացվող գործողությունների կատարումը կամ որոշակի ժամկետի հաշվարկը պայմանավորված է համապատասխան ծանուցումն ստանալու փաստով:

6. Ծանուցումներն առձեռն հանձնելու դեպքում դրանք հանձնվում են վարչական վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին:

7. Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերին ծանուցումներն ուղարկվում են նրանց պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, եթե նրանք այլ էլեկտրոնային փոստի հասցե չեն տրամադրել: Իրավաբանական անձ եւ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կողմին ծանուցումներն ուղարկվում են էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցներով, եթե այդ մասին միջնորդել է վարչական վարույթի մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերում էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցներով ծանուցումներն ուղարկելու անհնարինության պարագայում դրանք ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն:

9. Ծանուցումները փոստային առաքմամբ ուղարկելու դեպքում վարչական վարույթին կցվում է հասցեատիրոջն ուղարկելու մասին ապացույցը, իսկ պատվիրված նամակով ուղարկելու դեպքում՝ նաեւ հասցեատիրոջ կողմից ստացման վերաբերյալ ապացույցը:

10. Ծանուցումներն առձեռն հանձնելու դեպքում վարչական վարույթին կցվում է այն հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթ:

11. Ծանուցումներն էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու դեպքում վարչական վարույթի նյութերին կցվում են ծանուցումը ստանալու մասին էլեկտրոնային հավաստումը, իսկ հաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ ուղարկելու դեպքում վարչական վարույթի նյութերին կցվում են ծանուցումն ուղարկելու (հաղորդելու) փաստը հաստատող ապացույցները (արձանագրություն, հեռախոսագիր, ձայնագրություն եւ այլն):

12. Ծանուցումներն էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվելու դեպքում հասցեատերն ստանում է ծանուցման տեքստը կամ համապատասխան էլեկտրոնային հղումը, որի միջոցով ծանուցումը կարող է հասանելի դառնալ հասցեատիրոջը:

13. Վարչական վարույթի մասնակիցները պարտավոր են վարչական մարմնին անհապաղ հայտնել վարչական վարույթի ընթացքում իրենց հասցեի, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի հասցեի կամ հաղորդակցության այլ միջոցի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում համապատասխան ծանուցումն ուղարկվում է այն հասցեով կամ հաղորդակցության միջոցով, որով կատարվել է ծանուցումը, եւ հասցեատիրոջ վերջին հայտնի հասցեով ուղարկվելու ուժով համարվում է պատշաճ հանձնված:

14. Եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է կամ պատվիրված նամակով ուղարկելու դեպքում ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), ապա փոստային առաքանին ուղարկվում է վարչական վարույթում առկա այլ հասցեներով:

15. Սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված)»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ վիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Վարչական վարույթները հարուցվում են «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով, որի արդյունքում վարչական մարմնի կողմից հետապնդվող նպատակը վարչական ակտի ընդունումն է: Վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ վարչական մարմինները պարտավոր են օրենքով սահմանված կարգով ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին, որպիսի պահպանվեն նրանց՝ օրենքով

սահմանված իրավունքները եւ ազատությունները, մասնավորապես՝ լսված լինելու իրավունքը, ապացույց ներկայացնելու իրավունքը եւ այլն:

Սակայն, վարչական վարույթի իրականացման ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են վարչական վարույթի մասնակցի բացակայությունը եւ վերջինիս պատշաճ ծանուցման անհնարինությունը:

Ծանուցումները փոստային ծառայության կողմից վերադարձվում են մի շարք պատճառներով, մասնավորապես՝ «Չպահանջված» նշագրումով, որի դեպքում պարզ է, որ վարույթի մասնակիցը ծանուցագիրը կարող է չստանալ նաեւ միտումնավոր՝ խուսափելով ծանուցագրի ստացման հետեւանքներից:

Ուստի, վարչական վարույթի մասնակցի պատշաճ չծանուցվելու հետեւանքով՝ վերջինիս բացակայության հիմքով, վարչական վարույթը կասեցվում է:

Այդ հիմքերով կասեցված վարչական վարույթը վերսկսվում է կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ավելի քան 60 օր լրանալը: Կասեցման ընթացքում վարչական մարմինն օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, չի կարողանում 60-օրյա ժամկետում հայտնաբերել վարչական վարույթի հասցեատիրոջը, սակայն հետեւելով օրենքի պահանջին՝ վերսկսում է վարչական վարույթը եւ իրականացնում օրենքով նախատեսված բոլոր անհրաժեշտ գործողությունները: Հասցեատիրոջը չհայտնաբերելու պայմաններում, նշված գործողությունների ընթացքում վարչական մարմինը չի կարողանում հասնել օրենքով հետապնդվող նպատակին՝ վարչական ակտի ընդունմանը, եւ եւս մեկ անգամ կասեցնում է վարչական վարույթը, որի արդյունքում վարչական մարմնի կողմից կատարվում են լրացուցիչ ծախսեր: Բացի այդ, ավելանում են չկատարած պարտավորությունների համար օրենքով հաշվարկվող տույժերը, որը չի բխում նույնիսկ վարչական վարույթի մասնակցի շահերից:

Գործնականում խոչընդոտներ են առաջանում նաեւ հայտնաբերված խախտումների կապակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ընթացքում, երբ գործի քննությունն իրականացնող իրավասու մարմինն օրենքով սահմանված կարգով կրում է պարտականություն՝ գործի քննությունն իրականացնել միայն իրավախախտում կատարած անձանց՝ գործի քննության տեղի եւ ժամանակի մասին պատշաճ ծանուցումն ապահոված լինելու պայմաններում:

Վարչական մարմինները, որպես վարչական պատասխանատվության միջոցներ կիրառող մարմիններ, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթում հաճախ հնարավորություն չեն ունենում ապահովել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված անձանց պատշաճ վարչարարության իրավունքի իրացումը: Նման պայմաններում, վարչական ակտերի ընդունմամբ եզրափակվող վարչական վարույթները կարող են ընթանալ օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, հետեւյալ հանգամանքների առկայության դեպքում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին նույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված սահմանված ժամկետները խախտելը:

Գործնականում բազմաթիվ են դատական ակտերը, որոնցով անվավեր են ճանաչվել վարչական մարմինների կողմից ընդունած վարչական ակտերն այն հիմքով, որ վարչական մարմինները խախտել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները:

Ներկայացվող նախագծով առաջարկվում է, որ այն դեպքերում, երբ հնարավոր չէ վարչական վարույթի մասնակցին ծանուցել առձեռն, կամ պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, ի վերջո ծանուցումը հնարավորություն լինի տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում կարգավորվում է վարչական մարմինների կողմից վարչական վարույթի մասնակիցների ծանուցումների հարցը, մասնավորապես՝ սահմանվում է դրույթ, համաձայն որի՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սահմանված կարգով ծանուցելու հետ միաժամանակ ծանուցումը տեղադրվում է նաեւ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, որտեղ ծանուցումը տեղադրելու օրվան հաջորդող օրացույցային հինգերորդ օրն՝ անձն այլեւս կհամարվի պատշաճ ծանուցված:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի նվազեցում է նախատեսվում՝ այդ թվում ծանուցումների եւ օգտագործվող գրասենյակային պիտույքների համար նախատեսվող գումարը: